Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0025, Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1)

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ Մարիամ Գևորգի Այվազյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է հարակից իրավունքների համակարգում կատարողների և կատարումների իրավական պահպանության հիմնահարցերին: Թեման խիստ արդիական է՝ պայմանավորված մտավոր սեփականության իրավունքի համակարգում վերջին տասնամյակներում տեղի ունեցող խորքային վերափոխումներով, ինչպես նաև թվային տեխնոլոգիաների և համացանցային հարթակների արագ զարգացմամբ: Վերջիններս էապես փոխել են ստեղծագործությունների ստեղծման, օգտագործման և տարածման ավանդական մոդելները՝ առաջ բերելով նոր իրավական մարտահրավերներ կատարումների օգտագործման և կատարողների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Հարակից իրավունքների համակարգում կատարողների իրավունքները առանձնահատուկ տեղ են զբաղեցնում, քանի որ կատարումները, լինելով

ստեղծագործական գործունեության արդյունք, միաժամանակ ունեն մի շարք յուրահատուկ առանձնահատկություններ, որոնք տարբերակում են դրանք հեղինակային իրավունքի դասական օբյեկտներից: Այդ առանձնահատկությունները պայմանավորում են դրանց նկատմամբ հատուկ իրավական ռեժիմի ձևավորման անհրաժեշտությունը: Մինչդեռ, տեխնոլոգիական առաջընթացը, մասնավորապես՝ թվայնացումը և համացանցի միջոցով բովանդակության տարածման անսահմանափակ հնարավորությունները, էականորեն բարդացրել են կատարումների նկատմամբ վերահսկողության իրականացումը և մեծացրել են կատարողների իրավունքների խախտման ռիսկերը:

Հատկապես թվային միջավայրում կատարումների օգտագործման լայն հնարավորությունները՝ ներառյալ դրանց բազմակի վերարտադրությունը, հանրությանը մատչելի դարձնելը, հոսքային (streaming) ծառայությունների միջոցով տարածումը և այլ ձևերը, առաջ են բերում իրավական կարգավորման նոր խնդիրներ, որոնք պահանջում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակներում համապարփակ ուսումնասիրություն: Այս համատեքստում առավել ընդգծվում է միջազգային իրավական ստանդարտների և առաջադեմ իրավակիրառ պրակտիկայի դերը, որոնք կարող են ծառայել որպես ուղենիշ ազգային իրավակարգավորումների կատարելագործման համար:

Հայաստանի Հանրապետությունում կատարողների և կատարումների իրավական պաշտպանության ոլորտը, թեև որոշակիորեն կարգավորված է գործող օրենսդրությամբ, այնուամենայնիվ դեռևս ունի հայեցակարգային հստակեցման կարիք: Առկա են ինչպես նորմատիվ բացեր, այնպես էլ իրավական որոշ ինստիտուտների ոչ բավարար զարգացվածություն, ինչը հատկապես ակնառու է դառնում թվային դարաշրջանի պահանջների համատեքստում: Միևնույն ժամանակ, իրավակիրառ պրակտիկայի սակավությունը և դատական նախադեպերի գրեթե բացակայությունը լրացուցիչ բարդություններ են ստեղծում կատարողների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Նշված հանգամանքները վկայում են, որ կատարողների իրավունքների իրավական կարգավորման հիմնահարցերը պահանջում են համալիր և խորքային ուսումնասիրություն՝ մի կողմից միջազգային փորձի, մյուս կողմից՝ ազգային իրավական համակարգի առանձնահատկությունների համադրմամբ: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում այնպիսի տեսական և գործնական լուծումների մշակումը, որոնք կապահովեն կատարողների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև իրավական կարգավորման կանխատեսելիությունն ու հավասարակշռությունը քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների շահերի միջև:

Հեղինակը կատարել է հետաքրքիր, խորը, համապարփակ հետազոտություն: Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրվել է մեծածավալ գրականություն: Աշխատանքում առկա են բազմաթիվ արժեքավոր հետևություններ, մտահանգումներ և տեղեկություններ:

Պարագրաֆ 1.1.-ում հեղինակը անդրադառնում է կատարողների իրավունքների ձևավորման և զարգացման պատմական նախադրյալներին, դրանց էվոլյուցիային և ժամանակակից իրավական կարգավորման առանձնահատկություններին: Վերլուծության արդյունքում հեղինակն ընդգծում է, որ թեև մտավոր սեփականության ավանդական առանցքը երկար ժամանակ հանդիսացել է հեղինակային իրավունքը, այնուամենայնիվ կատարողների դերը ստեղծագործությունների կյանքի կոչման գործում հիմնարար նշանակություն ունի: Հեղինակը ցույց է տալիս, որ գիտատեխնիկական առաջընթացը արմատապես փոխել է կատարումների ընկալման և տարածման բնույթը՝ առաջ բերելով նոր իրավական խնդիրներ, հատկապես կատարողների կողմից իրենց կատարումների նկատմամբ վերահսկողության կորստի և տնտեսական շահերի խախտման տեսանկյունից: Միաժամանակ ներկայացվում է կատարողների իրավունքների միջազգային իրավական ամրագրման փուլային զարգացումը՝ սկսած դրանց ճանաչման բացակայությունից մինչև միջազգային պայմանագրերով և ազգային օրենսդրություններով դրանց պաշտպանությունը: Հեղինակը նաև արձանագրում է, որ

չնայած միջազգային և ներպետական իրավական կարգավորումների առկայությանը, մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, կատարողների իրավունքների իրացումը դեռևս բախվում է գործնական և տեսական խնդիրների՝ պայմանավորված իրավակիրառ պրակտիկայի և համակողմանի ուսումնասիրությունների պակասով:

Պարագրաֆ 1.2.-ում հեղինակը հանգամանորեն ուսումնասիրում է «կատարում» և «կատարող» հասկացությունների բովանդակությունը, դրանց փոխկապակցվածությունը և իրավական ձևակերպման առանձնահատկությունները: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը բացահայտում է, որ նշված հասկացությունները պետք է դիտարկվեն համակցված՝ որպես միասնական իրավական ինստիտուտի տարրեր, և դրանց լիարժեք ըմբռնումը հնարավոր է միայն փոխադարձ կապի մեջ: Հեղինակը համադրում է միջազգային կոնվենցիոն կարգավորումները, տեսական գրականության մոտեցումները և ազգային օրենսդրությունը՝ առանձնացնելով «կատարում» հասկացության հիմնական հատկանիշները, այդ թվում՝ գործողություն լինելը, ֆիզիկական անձի կողմից իրականացվելը, այլոց կողմից ընկալելի լինելը և հեղինակային իրավունքի օբյեկտների հետ կապը:

Միաժամանակ հեղինակը բարձր մակարդակով վերլուծում է ժամանակակից մարտահրավերները, մասնավորապես՝ թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության ազդեցությունը կատարումների բնույթի վրա՝ առաջարկելով տեսականորեն հիմնավորված մոտեցումներ դրանց իրավական կարգավորման վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև սպորտային և այլ սահմանային ոլորտների համեմատական քննությունը, որի միջոցով հեղինակը հստակեցնում է կատարումների իրավական պաշտպանության սահմանները: Աշխատանքի կարևոր ձեռքբերումներից է նաև ՀՀ օրենսդրության քննադատական վերլուծությունը և դրա կատարելագործման ուղղությամբ կոնկրետ առաջարկների ձևակերպումը, ներառյալ «կատարում» և «կատարող» հասկացությունների հստակեցված և ընդլայնված սահմանումները:

Պարագրաֆ 1.3.-ում հեղինակը կատարումների և կատարողների իրավունքները դիտարկում է մտավոր սեփականության տեսությունների համատեքստում՝ համադրելով բնական իրավունքի, անհատականության և տնտեսական խթանների տեսությունները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ այս տեսությունները տարբեր տեսանկյուններից հիմնավորում են կատարողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ ընդգծելով աշխատանքի արժեքը, ինքնարտահայտման դերը և հանրային շահը ստեղծարար գործունեության խթանման տեսանկյունից:

Նշվում է, որ կատարումները, որպես կանոն, բավարարում են ստեղծագործական բնույթի պահանջներին, բայց իրենց առանձնահատկություններից ելնելով՝ պահանջում են հատուկ՝ հարակից իրավունքների կարգավորում: Անդրադարձ է կատարվում նաև դեպքերին, երբ կատարողը կարող է միաժամանակ ունենալ և հեղինակային, և հարակից իրավունքներ՝ օրինակ՝ իմպրովիզացիայի և ստեղծագործական վերամշակման դեպքում:

Պարագրաֆ 2.1.-ում նշվում է, որ կատարողների իրավունքների միջազգային կարգավորումը երկար ընթացք է ունեցել՝ սկսած Հռոմի կոնվենցիայից, որը սահմանում էր միայն որոշ գործողությունների կանխելու իրավունք, մինչև Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը, որը առաջին անգամ ամրագրեց կատարողների ոչ գույքային և բացառիկ իրավունքները, և Պեկինի պայմանագիրը, որը 2012 ապահովեց հավասար պաշտպանություն ինչպես հնչյունագրերում, այնպես էլ տեսալսողական ամրագրումներում կատարվող կատարումների համար:

Պարագրաֆ 2.2.-ում հեղինակը ներկայացնում է, որ կատարողների անձնական ոչ գույքային իրավունքները՝ կատարող ճանաչվելու և կատարումը հնարավոր աղավաղումներից կամ համբավին վնաս հասցնող գործողություններից պաշտպանվելու իրավունքները միջազգային փաստաթղթերով ամրագրվել են որպես պարտադիր, սակայն դրանց իրացումը կարող է որոշ դեպքերում սահմանափակվել՝ կախված կատարման օգտագործման բնույթից: ՀՀ օրենսդրությունը այժմ սահմանում է այս երկու իրավունքները, սակայն առաջարկվում է ընդլայնել դրանք՝ ներառելով նաև

հրապարակման և հետկանչի իրավունքները, ինչպես նաև նախատեսել իրավունքների ժառանգական կիրառում:

Պարագրաֆ 2.3.-ում նշվում է, որ Հայաստանի օրենսդրությունը կատարողների համար ամրագրում է միջազգային փաստաթղթերով սահմանված հիմնական իրավունքները՝ հեռարձակում, ամրագրում, վերարտադրում, տարածում, հանրությանը մատչելի դարձնելը: Նախկինում չամրագրված կատարման ամրագրումը կատարողի առաջնային իրավունք է, որը թույլ է տալիս վերահսկել կատարման օգտագործումը և կանխել բութլեգինգը: Վերարտադրության իրավունքն ապահովում է կատարման օրինակների ստեղծումը և հանրությանը հաղորդումը:

Պարագրաֆ 3.1.-ում հեղինակը հանգամանալից վերլուծում է կատարումների տարածման իրավունքի և սպառման իրավունքի հարցերը ինչպես նյութական, այնպես էլ թվային միջավայրերում: Հեղինակը համալիր ուսումնասիրել է միջազգային պայմանագրերը և դատական պրակտիկան՝ ներկայացնելով իրավական խնդիրների վերաբերյալ հիմնավորված կարծիք: Բավական համառոտ և համակողմանի ներկայացված է առաջին վաճառքի դոկտրինի և սպառման իրավունքի կիրառելիությունը, ընդգծված են թվային միջավայրում առաջացող առանձնահատկությունները և գործնական նշանակությունը՝ հատկապես երաժշտության և էլեկտրոնային գրքերի ոլորտներում:

Հեղինակն ընդգծում է սպառման իրավունքի սոցիալական և տնտեսական առավելությունները՝ հասանելիություն, անձնական կյանքի գաղտնիության պահպանություն և շուկայի արդյունավետություն:

Պարագրաֆ 3.2.-ում հեղինակն ամփոփել է միջազգային և ԵՄ փորձը, Իտալիայի, Գերմանիայի, Իսպանիայի օրենսդրական օրինակները, ցուցադրել է դրույթների գործնական նշանակությունը և արդարացի վարձատրության հայեցակարգի զարգացումները հատկապես սթրիմինգային ծառայությունների համատեքստում: Արտացոլված են ոչ միայն իրավաբանական նորմերը, այլև դրանց սոցիալական և

տնտեսական ազդեցությունը կատարողների, հեղինակների և հանրության համար, ինչը թույլ է տալիս գնահատել աշխատանքը որպես տեսական և կիրառական գիտական կարևոր ուսումնասիրություն:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ հեղինակը կատարել է ավարտուն աշխատանք՝ իրականացնելով լայնածավալ հետազոտություն, օգտագործելով տեսական, պրակտիկ բազմաթիվ նյութեր: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի կողմից հրապարակված ութ գիտական հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացված աշխատանքին:

Այնուամենայնիվ, կարծում եմ, ատենախոսության մեջ առկա են առանձին վիճելի եզրակացություններ: Ցանկանում եմ հեղինակի ուշադրությունը հրավիրել դրանց.

1. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 45-րդ հոդվածը սահմանում է, որ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված թույլտվությունները տրվում են կատարողի կողմից, իսկ կատարողների խմբի դեպքում՝ նրանց կողմից լիազորված անձի միջոցով՝ օգտագործողի հետ գրավոր պայմանագիր կնքելու եղանակով: Ընդ որում, կատարողների խմբի անունից կնքված պայմանագիրը չի կարող տարածվել մենակատարների և դիրիժորների վրա:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ հեղինակը չի անդրադառնում կատարողների խմբի ներսում հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրներին: Մինչդեռ նշված հարցի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, եթե նկատի ունենանք, որ մի շարք կատարումների դեպքում, օրինակ՝ բալետային ներկայացումներում կամ սիմֆոնիկ նվագախմբերի կատարումներում, ներգրավված են բազմաթիվ կատարողներ: Նման պայմաններում առանձնակի նշանակություն են ստանում նրանց միջև իրավահարաբերությունների կարգավորման, թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև այդ գործընթացի առանձնահատկությունների հստակեցման հարցերը: Ուստի աշխատանքը էապես կշահեր, եթե հեղինակը անդրադառնար նաև այս խնդրին:

2. Աշխատության երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում հեղինակը նշում է, որ հետազոտության շրջանակներում ելնում է այն հիմնադրույթից, համաձայն որի՝ հանրությանը հաղորդելու իրավունքը լայն իրավունք է, որն իր մեջ ներառում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ հիմք ընդունելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության համապատասխան մոտեցումները: Սակայն, մեր գնահատմամբ, հեռարձակման իրավունքը հանրությանը հաղորդելու իրավունքի մեջ ներառելը պահանջում է լրացուցիչ և առավել հիմնավոր իրավական փաստարկում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց հեղինակի կողմից վկայակոչված միջազգային պայմանագրերը տարանջատում են հանրությանը հաղորդելու և հեռարձակման իրավունքները: Հետևաբար, տվյալ հարցում հեղինակի դիրքորոշումը կարիք ունի առավել խորացված տեսական և նորմատիվ հիմնավորման:

3. Աշխատության երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում, քննարկելով կատարողների արդարացի վարձատրության հարցը, հեղինակը նշում է, որ առաջացել է հեղինակների և կատարողների վարձատրության նվազագույն դրույքաչափերի վերանայման, ինչպես նաև կառավարության նոր որոշման ընդունման անհրաժեշտություն, որը պետք է արտացոլի շուկայում ձևավորված նոր իրողությունները և կատարումների օգտագործման արդի ձևերի, այդ թվում՝ սթրիմինգային ծառայությունների առանձնահատկությունները: Այս միտքը, անկասկած, արդիական և հիմնավորված է: Սակայն, մեր կարծիքով, աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե հեղինակը ոչ միայն մատնանշեր նման վերանայման անհրաժեշտությունը, այլև առաջարկեր կառավարության կողմից նշված դրույքաչափերի սահմանման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր՝ միջազգային փորձին համահունչ: Այդպիսի մոտեցումը հետազոտությանը կհաղորդեր ավելի կիրառական ուղղվածություն և գործնական արժեք:

Վերը նշված դիտողություններն, այնուամենայնիվ, կրում են մեթոդաբանական, բանավիճային բնույթ, և ամենևին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Մարիամ Գևորգի Այվազյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Կատարումների իրավական պահպանության հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» կետ 7-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ Ա.Ա. Թավադյան

Դոցենտ, ի.գ.թ.

31.03.2026թ.

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Աշոտի Թավադյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ Ա. Պետրոսյան